



## ԱՐՏԱԴՐՈՒԹՅԱՆ ԷԿՈՆՈՄԻԿԱ և ՀԱԳՄԱԿԵՐԱՎՈՒՄ

### ՌԱՅԻՈՆԱԼ ԿԵՐՊՈՎ ՕԳՏԱԳՈՐԾԵԼ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՏԵԲՍՏԻ, ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅԱՆ ՄՆԱՑՈՒԿՆԵՐԸ

Ա. ԽԱԶԱՆՈՎ

Լենինականի Մայիսյան ապստամբության անվան տեխնիկական կոմիտեի գլխավոր ինժեներ

1957 թ. դեկտեմբերին Զեխոսլովակիայում մենք ծանոթացանք տեխնիկական արդյունաբերության մնացուկների օգտագործմանը: Պատահական չեղ, որ այդ հարցը մտցվեց ՍՍՌՄ և Զեխոսլովակիայի ռեսպուբլիկայի միջև տեխնիկական համագործակցության մասին կնքված պայմանագրի մեջ, քանի որ Զեխոսլովակիայի տնտեսական կյանքում տեխնիկական արդյունաբերությունը աշքի ընկնող տեղ է գրավում: Բամբակեղենի և բրդեղենի արդյունաբերության ձեռնարկությունները ոչ միայն լիովին բավարարում են երկրի տեխնիկական զարգացմանը, այլև համաշխարհային շուկային մատակարարում են հսկայական պահանջարկ ունեցող գործվածքեղենն: Նրանք աշքի են ընկնում հիմնալի մշակմամբ, ներկերի պայմանագրությամբ, հագեցվածությամբ ու լավորակությամբ:

Զեխոսլովակիայի տեխնիկական արդյունաբերության մյուս բնորոշ առանձնահատկությունն այն է, որ նա աշխատում է ներմուծվող հումքով: Քանի որ ռեսպուբլիկան զուրկ է սեփական բամբակից և շատ քիչ բուրդ ունի, այստեղ հումքը շատ խնայողաբար են օգտագործում և նրա վերամշակման ժամանակ ամեն կերպ ձգտում են պահանջնել մնացուկները:

Մնացուկների կրճատման համար մղվող պայքարը, որը ուժեղանում է արտադրության բարձր կուտուրայով, թափանցում է բոլոր տեխնիկական արդյունաբերությունների գործունեության մեջ և լավ արդյունքներ տալիս:

Բայց այդպիսի պայմաններում էլ տեխնիկական արդյունաբերության առանձնահատկությունը կանխորշում է զգալի քանակությամբ մնացուկների գոյացում ( $2-15\%$  տարրեր արտադրությունների համար):

Զեխոսլովակիայում տեխնիկական արդյունաբերության մնացուկների օգտագործումը դրված է հաստատում և ռացիոնալ հիմքերի վրա: Բոլոր մնացուկների հավաքման գործը կենտրոնացված է մեկ՝ «Տրդարնի» մասնագիտացված ձեռնարկության մեջ:

Այդ ձեռնարկությունը տեխնիկական մոտ ունի մնացուկների հավաքման բազա, իսկ մի քանի բազաներին կից կան տարրեր կարողության (մինչև 500 բանվոր ունեցող) գործարաններ:

«Տրդարնի»-ի ձեռնարկությունը տարեկան հավաքում է  $30,5$  հազ. տ մնացուկ: Դրանից մոտ 27 հազ. տ բամբակեղենի, բրդեղենի, տրիկոտաժի և կարի արդյունաբերության մնացուկներն են:

Մոտ 2,15 հազ. տ կաղմում է բնակչո թյունից հավաքված լաթը (մաշված բամբակե, բրդե, մետաքսե, խառը, ինչպես նաև տրիկոտաֆի գործվածքներ) և 1,5 հազ. տ ներմուծվող լաթ (հիմնականում Անգլիայից):

«Տրդարնի»-ի պարտականությունների մեջ է մտնում մնացուկների հավաքումը, տեսակավորումը, փոշեղոկումը և մաքրումը: Դրանից հետո մնացուկների մի մասը հանձնվում է համապատասխան ձեռնարկություններին, որպես պատրաստի հումք, իսկ մյուս մասը «Տրդարնի»-ի ձեռնարկություններում վերամշակվում է որպես պատրաստի գործվածքներ:

Այսպիսով, մնացուկների օգտագործումը դառնում է արդյունաբերության համարժեք ճյուղ իր դեկավարությամբ և բարձրորակ կաղըերով, որոնք ընդունակ են ապահովել բավարար տեխնիկական մակարդակը<sup>\*</sup> և մնացուկների ուցիոնալ օգտագործումը: Մնացուկների արդյունաբերական օգտագործմանը խոչըր մասնագետների մասնակից դարձնելն ապահովեց մնացուկներից արժեքավոր արտադրանքի նոր տեսակների անընդհատ ստեղծումը: Այժմ վաղուց հայտնի գործվածքների, օրինակ, բամբակե գործվածքների զանազան տեսակների (ի դեպ շատ որակով և տարատեսակ) պատրաստման հետ միասին լայն տարածում է ստացել ոչ գործվածքային տեքստիլը:

Արտադրանքի այս նոր տեսակն իր հատկությամբ և արտաքին տեսքով իրենից ներկայացնում է ինչ-որ միջին բան թղթի և տեքստիլ գործվածքի միջև: Այն ստացվում է համապատասխանորեն պատրաստված տեքստիլ մանրաթելերից, հատուկ լուծույթներով տոփորելու և կալանդրելու միջոցով (տաք հարթում ճնշման տակ): Ոչ գործվածքային տեքստիլը, որպես ջերմամեկութիւն նյութ, մեծ պահանջարկ ունի ավտոմոբիլային, ինքնաթիւային արդյունաբերության մեջ և մյուս ճյուղերում:

Տեքստիլ մնացուկների օգտագործման համար մեծ հեռանկարներ կան Հայաստանում, որտեղ տեքստիլ արդյունաբերությունը խիստ զարգացած է և ընդգրկում է բամբակե, բրդե, մետաքսի ձեռնարկությունները: Գոյություն ունեն նաև տրիկոտաֆի և կարի ձեռնարկություններ:

Տեքստիլ արդյունաբերության հումքը՝ բուրդն ու բամբակը, նրանցում նյութականացված մեծ

քանակությամբ մարդկային աշխատանքի շնորհիվ, շատ արժեքավոր է: Այդ արժեքավորությունը որոշվում է նաև նրանով, որ հնարավոր է դրանք վերամշակել ազգաբնակչությանն անհրաժեշտ լավորակ և գեղեցիկ ապրանքների:

Մարդը ոչ մի հափուատ չի մաշում մինչև նրա բոլոր մասերի լրիվ քայլքայումը: Եվ նրա մի փոքր մասի քայլքայվելու պատճառով անպետք դարձած հափուատը իր մեջ պարունակում է միանգամայն անպնաս մնացած բազմաթիվ թելեր, որոնք նույնպես կարող են օգտագործվել որպես հումք՝ լիարժեք ու թանկարժեք նոր տեքստիլ գործվածքներին պատրաստելու համար: Դժբախտաբար, մաշված տեքստիլ ապրանքները չեն օգտագործվում, որը բացատրվում է երկու պատճառով: Առաջին, արդյունաբերությունը հաստատակամ ձգուում շունի այդ մաշված իրերը ձեռք բերելու, քանի որ չկան դրանք վերամշակող բավականաշատի քանակությամբ ձեռնարկություններ: Երկրորդ, վաճառքի մեջ բուրովին բացակայում են էժանագին ու հարմար այնպիսի գործվածքներ, որոնք շատ անհրաժեշտ են տնտեսության մեջ հատակները լվանալու, կոշկենը մաքրելու, փոշին սրբելու համար:

Արդյունաբերության մեջ փալասների արտադրումը (դրանք կարելի է արտադրել ամենացածր սորտի մնացուկներից) հարմարություններ կըստեղծի տնային տնտեսությունների համար և հումքի նոր հոսանք՝ արդյունաբերության մեջ:

Մնացուկները հավաքող և վերամշակող հատուկ արդյունաբերական ձեռնարկությունների բացակայության պատճառով մեծ քանակությամբ մնացուկներ են կորչում և խելացիորեն չեն օգտագործվում, մինչդեռ տեխնիկապես հագեցված, սպառման լիարժեք ապրանքներ ստեղծող արտադրությունը մնացուկների օգտագործումը կըդարձնի արդյունաբերության շահավետ ճյուղերից մեկը:

Հայկական ՍՍՌ տեքստիլ, կարի և տրիկոտաֆի արդյունաբերության մնացուկների քանակությունը տնտեսապես արդարացնում է ուստիուրիկայում մնացուկները հավաքող ու վերամշակող հատուկ ձեռնարկության ստեղծումը: Իսկ բնակլության պահանջմունքները լիովին հնարավոր են դարձնում այդ ձեռնարկության արտադրանքն իրացնելու ինչպես Հայաստանում, այնպես էլ երկրի այլ շրջաններում:

Առաջարկվող միջոցառումը իրենից ներկայացնելու է նաև թափոնավիդոնյան ֆաբրիկայի մնացուկներ հավաքող ձեռնարկությունների կոմիտեքս: Նրանում անհրաժեշտ է կենարունացնել բացարձակապես բոլոր մնացուկների հավաքման գործը, տեքստիլ ձեռնարկություններն ազատել նրանց նույնիսկ սկզբնական մշակման գործից: Տեքստիլ ձեռնարկությունների վրա պետք է թողնել միայն մնացուկները փաթեթելու և փոխադրելու պարտականությունը, որը կկանխի նրանց կորուստները:

Նախագծվող ձեռնարկության մեջ պետք է լինեն հետևյալ արտադրություններն ու բաժինները:

1. Պահեստներ ու տեսակավորող, փոշեզըրկող, փիլումացնող, գլուխ, կարանդացին բաժիններ և հատուկ բաժին՝ սոսնձման համար:

2. Թափոնավիդոնյան ֆաբրիկա՝ խառնելու, գլենու, նախամանելու, մանելու, նախապարարաստական մանածագործական, մանածագործական և վերջնամշակման բաժիններով:

Ուսպուգլիկայում գոյություն ունեն արտադրության գգալի մնացուկներ, որոնք առաջարկվում ձեռնարկության համար կարող են իրակ հումք ծառայել (աղյուսակ 1):

### Աղյուսակ 1

Զենարկության անունը	Մնացուկների անվանումը	Համար գլուխ	Համար կարանդացին	Համար գլեն	Համար մանել
2	2	3	4		
Եռկանի մահուրի ֆաբրիկա	Քերանք (սճիր) կիսա- բրդել գլուխ	93	15,4		
"	Աղյամաղ ձողիկներից (թափուկ)	110	5,9		
"	Մանուգալումբի կտոր- ներ	107	0,8		
"	Կավառման հանգույց	108	5,5		
"	Մանվածքալին ավելուկ (պոմետ)	103	0,8		
"	Թափուկ (վայալ) գր- գիւների տակից	109	7,8		
"	Կտորանք կիսաբրդել	95	2,0		
				37,7	
Եռկանի բրդել նուրբ գործվածքեղենի կոմիտենատ	Հնդամենը . . . Սանդերքի խծուժ (օչես) Խոշոր	57	22,6		
"	Մաքուր բրդել . . . կիսաբրդել . . .	57	193,0		
"	Սանդերքի խծուժ մանը մաքուր բրդել . . . կիսաբրդել . . .	58	1,0		
		58	9,7		

1	2	3	4
Եռկանի բրդել նուրբ գործվածքեղենի կոմիտենատ	Կորդային քերանի մաքուր բրդել . . . կիսաբրդել . . . »	55	1,0
"	Մայրեր՝ 1 թելով ոլո- րած	55	9,7
"	մաքուր բրդել . . . Մայրեր՝ 2 թելով ոլո- րած	67	0,6
"	Կիսաբրդել . . . Մայրեր՝ ոլորած թեղանի կարտով (քանակ)	74	8,9
"	Շոհած մայրեր և հենքի կտորանք ավելուկ	76	11,5
"	Գղիլ ցեխերի ավելուկ մաքուր բրդել . . . կիսաբրդել . . .	71	0,5
"	Մանով ցեխերի ավելուկ մաքուր բրդել . . . կիսաբրդել . . .	72	0,3
"	Ավելուկ, միակցող-ոլո- րող, մանով . . .	73	4,9

Հնդամենը . . .	293,0
Լինինականի տեքստիլ կոմիտենատ	Քրքիլ մանրուք և աղ- վամազ . . .
"	Թմբուկի և վալանի խծուժներ . . .
"	Դլմիկի խծուժներ . . .
"	Մաքուր ավելուկ
"	Թմբուկի և վալանի խծուժներ . . .
"	Դլմիկի խծուժներ . . .
"	Քրքիլ մանրուք և աղ- վամազ . . .
"	Գղիլ մանրուք և աղվա- մազ . . .
"	Գղիլ . . .
"	Թմբուկի աղվամազ բն- դունող և հանող վալ- յանից . . .
"	»
"	Աղյամաղ՝ գղիլ մերե- նաների ծողիկներից .
"	Աղյամաղ՝ վերին գլա- նիկներից . . .
"	Սոխագույն ավելուկ .
"	Հնդամեն գրշակարում
"	Նկողակարպի աղվամազ
"	Ավելուկ կեղասուտ . . .
"	Ավելուկ առանց ստան- դարտի . . .
"	Խճճվածք-կտորներ . . .
"	Հենքի ծայրեր՝ ուսկու
"	մենք . . .
"	Հենքի և թեղանի խճճ- վածք . . .
"	Հենքի և թեղանի ավե- լուկ . . .
"	Կերպարան միակցու- թյալ թափոններ . . .
	711,4
Քիդամենը . . .	—
Բոլորը միասին . . .	1042,1

Բացի դրանից, վիգոնի ֆաբրիկայի համար պահանջվում է բամբակե հիմնական մանվածք՝ 600—800 տ քանակով:

Տեքստիլ արդյունաբերության մասցուկների վերամշակման շնորհիվ կարելի է ստացված հումքից արտադրել մոտավորապես հետևյալ դորժականը:

1. Մահուրներ տղամարդկանց և կանաց կոստյումների համար, բամբակե հենքի ձևավոր ոլորների թափոնային մանվածքի թեզանի կամքի:

2. Վերմակ՝ ցածր համարների թափոնային մանվածքի կամքից, երփներանգ գզվածքով:

3. Երփներանգ գործված ջալեր:

4. Արտահագուատ գործվածքներ:

5. Երկշերտ կամ բազմաշերտ գործվածքներ կոշկեղենի արդյունաբերության համար:

6. Ֆլանել:

7. Հատակները վլանալու, փոշի մաքրելու և կոշիկները սրբելու փալասներ:

8. Արդյունաբերական բամբակի զանազան տեսակներ:

9. Չգործված տեքստիլ (տերեկս տիպի)՝ ինքնաթիռների և ավտոմոբիլների կահույքը ծածկելու համար:

10. Հղկող սկավառակներ:

11. Կինոլեռումի գործվածքներ՝ տնային գործածության կանացի պայուսակներ:

Նախագծվող ձեռնարկության համար՝ կպահանչվի հետեւյալ բանակությամբ բանվորական ուժությամբ:

Թափոնային արտադրության համար՝ 100 հոգի վիգոնի արտադրության համար՝ 400 հոգի:

Ընդամենը՝ 500 հոգի

Ձեռնարկությունը կառուցելիս անհրաժեշտ է, որ նա մոտ լինի հումքի աղբյուրներին և երկաթուղուն: Նա շատ էլեկտրաէներգիա և ջուր չի սպառում:

Այսպիսով, Հայկական ՍՍՌ-ում թափոնների հավաքման ու վերամշակման մասնագիտացված ձեռնարկությունը կարելի է կառուցել երկաթուղուն մոտ գտնվող ամեն մի խոշոր բնակավայրում:

Սպառվող հումքի որակից և արտադրանքի ստացվող ասորտիմենտից ենելով, կարելի է վստահորեն ասել, որ նման ձեռնարկության կառուցվումը տնտեսապես իրեն կարդարացնի և հնարավորության կտա ավելի ռացիոնալ կերպով օգտագործել արժեքավոր տեքստիլ հումքը:

## Արտադրության մեքենայացում և ավտոմատացում

### ՊՈԼԻՄԵՐԱՑՄԱՆ ԶԵՐՄԱՍՏԻՃԱՆԱՑԻՆ ՌԵԺԻՄԻ ԱՎՏՈՄԱՏԻԿ ԿԱՐԳԱՎՈՐՈՒՄԸ

Ա. ԴՐԱՅՎՈՎ

Ինժեներ

Ա. Մ. Կիրովի անվան գործարանում քլորպարենի էմուլսիայի պոլիմերացման պրոցեսը կատարվում է էմալապատված ապարատներում, պարբերական եղանակով: Այդ ապարատներն

ունեն պրոպելլերային խառնիչներ՝ ու շապիկներ՝ սառեցնող աղաջրի շրջապտուսի համար: Քլորպարենի պոլիմերացման ժամանակ տեղի է ունենում էկզոպերմիկ ռեակցիա, որի դեպքում